**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-03/18 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մարտի 17-ին կնքված N ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-03/18 պայմանագրում 2018 թվականի մայիսի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ:** Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են Պայմանագիրն ավելացնել վճարման ժամանակացույցով:

**Փոփոխության նկարագրություն:** Կողմերը որոշեցին 2018 թվականի մարտի 17-ին կնքված N ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-03/18 ծածկագրով գնման պայմանագիրը լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով (Հավելված 2)՝ համաձայն հավելվածի:

**Փոփոխության հիմնավորում:** Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.1 և 8.5 կետերը՝ պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N1 հավելվածի 56-րդ կետի պահանջները:

Պատվիրատու՝ **<u>ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</u>**

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1
## «17» մարտի 2018թ. N **ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-03/18** գնման պայմանագրի

*ք. Երևան* «15» *մայիսի 2018թ.*

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Մանուկյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Յասոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Խուրշուդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2018 թվականի մարտի 17-ին կողմերի միջև կնքված N **ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-03/18** ծածկագրով գնման պայմանագրի 8.1. և 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1. Կողմերը որոշեցին 2018 թվականի մարտի 17-ին կնքված N **ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-03/18** ծածկագրով գնման պայմանագիրը լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով (Հավելված 2)՝ համաձայն հավելվածի:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ**<br>ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի<br>Գլխավոր վարչության<br>ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ<br>ՀՎՀՀ 01204231<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական<br>վարչություն<br>Հ/Հ 900013207023<br>Ա. Մանուկյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | «Յասոն» ՍՊԸ<br>ՀՀ, ք. Երևան, Վրացական 16<br>«Արարատբանկ» ԲԲԸ<br>ՀՀ 1510002226470100<br>ՀՎՀՀ 02540338<br>Տ. Խուրշուդյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

Հավելված N
« 15 » Սեպտ. 2018թ. կնքվա
**ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-03/18** *ծածկագրով պայմանագր*

# ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ արտաբյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 22831200/301 | Վարժությունների թերթեր | ... % | ... % | ... % | ... % | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | **147600** |

***** *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի Գլխավոր վարչության<br>ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ<br>ՀՎՀՀ 01204231<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013207023<br>Ա. Մանուկյան<br>_______________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | «Յասոն» ՍՊԸ<br>ՀՀ, ք. Երևան, Վրացական 16<br>«Արարատբանկ» ԲԲԸ<br>ՀՀ 1510002226470100<br>ՀՎՀՀ 02540338<br>Տ. Խուրշուդյան<br>_______________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |